«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

13 օգոստոսի, 2026 թվականի N 3-26-L

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 10-Լ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 43-րդ կետի 6-րդ, 49-րդ կետի 2-րդ և 57-րդ կետի 7-րդ ենթակետերով, ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված թիվ 10-Լ որոշման հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարվող հետևյալ փոփոխությունները.

1) Հիմք ընդունելով ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2026 թվականի հունիսի 11-ին ընդունված թիվ 11/6 որոշմամբ ներկայացված առաջարկությունը՝ լուծարել ԵՊՀ-ի «Արտասահմանյան գրականության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը և ուժը կորցրած ճանաչել հավելվածի 60.4.-րդ կետը:

2) Հիմք ընդունելով ԵՊՀ ռեկտորի առաջարկությունը՝

ա. լուծարել ԵՊՀ-ի «Էներգետիկ համակարգի շահագործման բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը և ուժը կորցրած ճանաչել հավելվածի 35-րդ կետը.

բ. լուծարել ԵՊՀ-ի «Հակահրդեհային ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանումը և ուժը կորցրած ճանաչել հավելվածի 37-րդ կետը.

գ. լուծարել ԵՊՀ-ի «Մեխանիկական արհեստանոց» կառուցվածքային ստորաբաժանումը և ուժը կորցրած ճանաչել հավելվածի 38-րդ կետը.

դ. լուծարել ԵՊՀ-ի «Տարածքի բարեկարգման և կանաչապատման բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը և ուժը կորցրած ճանաչել հավելվածի 39-րդ կետը.

ե. լուծարել ԵՊՀ-ի «Կաթսայատուն» կառուցվածքային ստորաբաժանումը և ուժը կորցրած ճանաչել հավելվածի 40-րդ կետը.

զ. լուծարել ԵՊՀ-ի «Տնտեսական գործունեության կազմակերպման և վերահսկման բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը, իր ենթաստորաբաժանումներով.

է. ստեղծել «Տնտեսական գործունեության կազմակերպման և վերահսկման վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը, որի կազմում ստեղծել «Տեխնիկական սպասարկման բաժին» ու «Համակարգման և պլանավորման բաժին» կառուցվածքային ենթաստորաբաժանումները և հավելվածի 41-րդ կետը (ենթակետերով) փոփոխել ու շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«41. Տնտեսական գործունեության կազմակերպման և վերահսկման վարչություն
41.1. Տեխնիկական սպասարկման բաժին
41.2. Համակարգման և պլանավորման բաժին».

ը. «Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը միացման ձևով վերակազմակերպել «Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման հետ և ուժը կորցրած ճանաչել հավելվածի 49.2-րդ կետը: Հավելվածի 49.1-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«49.1. Հայ գրականության և գրականության տեսության ամբիոն».

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Ս. Ռ. Պապիկյան

ք. Երևան